

ռազնորդ Տ. Մելքիսեդեկ Սրբազնի կարգադրութեամբ մէկ քանի կրթասէր անձերու գիմում ըլլալով, անմիջապէս 10 ոսկիի նպաստ մը յանձնուեր է Սարցեան էֆո-ի, և կը յուսացուի, որ ուրիշ նպաստողներ ալ պիտի ըլլան, որովհետեւ Սարցեան էֆէնտի Զմիւռնից մէջ ունեցած կարծ պաշտօնափառութեանը միջոցին նոր ապացոյց մը տուաւ թէ ինք կրթութեան անձնուէր ուսուցիչ մըն է:

— Ասկէ երկու ամիս առաջ Թէհրանի Հայերը հիմը զրին երկրորդ ազգ՝ երկուսու նախակրթարանի մը, Տէօվէթայ թաղին մէջ, նախագահութեամբ Բագրատ Վ. ին, Այս վարժարանը ընդարձակ սրահ մը պիտի ունենայ, պէտք եղած ատեն թատրոնի վերածուելու համար: Ընութեան մասնախումը կը կազմեն Մարտիրոս Խան Դաւիթխանեանց, Պ. Ալիքսան Թօռնեանց և ուրիշներ՝ ատենապետութեամբ Յովհաննէս Խան Մասեհեանցի, Առ այժմ՝ 3000 թուան ծախսել որոշուած է, որուն 2000-ը արգեն ստորագրուած և ծախսուած է:

— Էջմիածնի Ա. Հայրապետը՝ 300 ոսկի զըրկեր և Պատրիարքարան, որ հանգանակուած է Պաքուի և այլ քաղաքաց մէջ, ի նպաստ կարուելոց, Նորին Ա. Օծութիւնն, այս առթիւ Պատրիարքարանէ ուզեր է նպաստից Սնտուկին ընդհանուր հաշիւն:

## ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ



Փարիզում Հրատարակուել է իշխան Գուիտոն Լուսինեանի ֆրանսահայ ընդարձակ պատկերազարդ բառագրքի Ա. Հատորը, որը բաղկացած է Ժ. + 1061 եռամբեւ էջերից և պարունակում է Ա—Ա տառերը: Այն աշխատութիւնը մինչև այժմ Հրատարակուած ֆրանսահայ բառարանների մէջ ամենից ընդարձակն է: Անը համեմատելով մի քանի էջ Նորայրի բառարանի հետ, աեսանք թէ, Լուսինեան բառագրքն անհամեմատ աւելի ճնշէ քան Նորայրինը: Օրինակի համար, Նորայր էջ 239, բ սիւնակ (Chipie—Chlorhydrique) ունի 27 բառ, իսկ Լուսինեան ունի 224 բառ, Նորայր էջ 461, բ սիւնակ (éneide—enfant) 14 բառ, Լուսինեան 22 բառ, Նորայր էջ 83, բ սիւնակ (architrésorier—ardent) ունի 17 բառ, Լուսինեան 70 բառ. բայցի

այս փոփոխութիւնից Լուսինեանի բառագիրը նաև զարգարուած է, 1246 պատկերներով, որոնցից 427-ը բյուրի, 428-ը կենդանիների, իսկ մնացեալ 396-ը այլ և այլ դրսիքների անային առարկաների են: պատկերներ:

Բառագրքի սոյն Ա. Հատորի զինն է, 25 ֆրանկ=10 ռուբրի (թղթակազմ), երկրորդ և վերջին հատորը որ դեռ մամուլ տակ է, արժելու է նոյնպէս 25 ֆրանկ:

\* \*

ԸՆԴԱՐԱՐՉՈՒԿ ՕՐԾ.3033 Ա.Վ.Ա.Յ. Հետականացի:

Տոմար, զանազան զիմելիքներ, վիճակագրական տեղեկութիւններ, Կ. Պոլիս, տպագրութիւն Յ. Մամեթէսուանի, զինն է 10 զրուշ:

Կ. Պոլսի աղջային հիւանդանոցի ընդարձակ օրացոյցի հրատարակութիւնն սկսուած է անցեալ տարուանից բայց այս տարի աւելի կասարելութեան է հասցրած: Անունը օրացոյց է: բայց խսկալէս 450 երեսից բաղկացած բանասիրական և ուրիշ կարմոր տեղեկութիւններով լի մի ժողովածու է: Բաւական է միայն օրացոյցի մի քանի հատուածի բովանդակութիւնը յիշենք, որ ընթերցազները դաշտական սահման այդ հրատարակութեան մասին: Բուն օրացոյցին հետեւում է Եկեղեցական, գրբոցական բարեգործական, զրակական և արուեստագիտական թուանշանները վերնազրով հասուածը, ուր ամենի տեղեկութիւններ կան յայտնուած վերնազրի համաձյն զանազան անձնաւորութիւնների և հաստատութիւնների մասին: Որ հեշտ չէ նոյն իսկ բանասէր անձի համար հարկանոր ժամանակ իսկոյն գանել:

Այս թուակարգութեան կցուած է, յատուկ անունների մի ցանկ, որով շատ դիրանում է ցանկացած թուականները զանելու 40—76 եր.: Կ. Պոլսի Հայերը և իրենց պատրիարքները: վերնազրով հասուածը, թէ, և համաօտ բայց շատ շահեկան ուսումնական թիւն է. Կ. Պոլսոյ պատրիարքների ժամանակագրութեան համար: Արքան մեզ յայտնի է, այս առաջին աշխատութիւնն է. Կ. Պոլսոյ պատրիարքութեան մասին ուսուի նորա հեղինակը՝ Հրանտ Աստուածը, որ և ամբողջի խմբագիրն է, արժանի է ամենայն շնորհակալութեան:

Այս հատուածի հետ Առաքելական Աթոռ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց ժամանակագրութիւնը բանասէրների համար ամենից հետաքրքրական մասերն են: Վերջին հատուածը հրատարակուած էր անցեալ տարի ևս բայց այս անգամ նոր ձեռով և նոր մանրամանութիւններով որ զրուած է: բարձրասահման եկեղեցականի մը կազմէ: Այս ժամանակագրութիւննը մեր հին և նոր ժամանակագրութիւնների մէջ ամենից ճշատգոյնն է, բայց զերծ չէ մի երկու թերութիւնից, որի համար տեղի սպութեան պատճառով տարարագրաբար այսակ խօսել չենք կարող:

Եանասէրների համար հետաքրքրական այս բաժիններից զատ՝ միանկազրական տեղեկութիւններ կան Արմաշու Գոյրեվանքի: Կ. Պուստ վարժարանների Սանասարեան Պերպերեան և ուրիշ վարժարանների և միւս ազգային հաստատութիւնների մասին: Ով կամենում է փոքր իշտակ: ամենով տեղեկութիւն ստանալ մեր տաճկահայ եղբայրների զիտական, դպրոցական և բարեգործական միանկի մասին, յանձնարարում ենք այս օրացոյցը, որի ամբողջ եկամուտը յատկացուած է մեր քրիստոնէական—բարեգործական մէծ հաստատութեան՝ Ազգային հիւանդանոցին:

Այս հատուածներից զատ՝ աեղեկութիւններ է պարունակում օրացոյցը այլ և այլ օգտակար գիտելիքների մասին և զարգարուած է Արքաղան Օրմաննեան պատրիարքի և հիւանդանոցի զանազան տեսարանների պատկերներով:

ՅՈՒՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՐԱԳՐԱՅ ԱՅՆԱՍԱՐԵԱՆ  
վարժարանի ի Կարին: կազմոց Հրամաց Յ. Ա. Ամասեան:  
Վիեննա. 1900 թ. լ. X. + 37 էր.

Վիեննայի Միհթարեան Հայրերը մի գումար ձևանարկութիւն են արել հրատարակելով հայ ձեռապիրների ցուցակը: Այս ձեռարկութեան դրույ դործոցը չ. Տաշեանի վարչական համարական համար համար առինակով կազմում են և միւս փոքր ցուցակները: Ներկայ հրատարա-

կութիւնը Տաճկասանի ձեռապիրների Ա. տետրակն է, և Զ. հատորի սկզբանաւորութիւնը: Ցուցակը կազմել է մեր ամսագրի աշխատակից ար. Հ. Անանեան: Յարդելի պարունը ալիս է նաև ցուցակի համառաւութիւնը գերմաններէն լիզուափ: յառաջարանը ցուցակագրած ձեռապիրների համարման կարծ պատմութիւնն է, և մի ընդհանուր տախտակով դաշտաբար է ասլիս նկարագրած: 43 ձեռապիրների նիւթիւն մեծութեան, զրի, ծագման, զրիների տեղի և բովանդակութեան մասին: Մազարաթ ձեռապիրների թիւը 5 է, իսկ վեցերորդը կիսով չափ մազարաթ: ամենաշին ձեռապիրը 986 թ. կարմիր գոյնով, միջին երկամագրով աւետարանն է, որի յիշատակարանները հետաքրքրական են նաև լիզուարաննական տեսակետով: Բառ բօխանդակութեան ցուցակագրուած ձեռապիրները մէծ մասով ընականարար աւետարաններ և ժամակարգութեան վերաբերեալ զբքեր են. մի օր. Մանրուտումն, 2. օր. ժողովածու, մի օր. Տաթեացու քարոզիլը, մի օր. Վարք Հարանց, մի օր. զիրք Աւհմանաց Դաւթի, մի օր. Ցովհաննէս կամ մի պատմութիւնն, և. Լամբրոնացու զրութիւնները են: Ձեռապիրների նկարագրութեան կցուած է յատուկ անունների և նիւթերի ցանկ:

ՍՄԲԸ ՇՈ. ՀԱՅԵՐԵՆ. ՑԻԵՊՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՐԴԱԿԱՆ ՏՈՆԻ ՏՈՆՎԱԿԱՆ ՏՈՆԻ ԱՐԴՅՈՒՆՎԱՐ ՄԱՍԻՆ  
Մուկուտ. 1901 թ. էր.  
70. զին է 75 կ:

Հեղինակը Վարդական տօնը պատկերացնելու համար համառաւութողիրդականացրած ձեռով պատմում է Հայոց թագավորութեան բաժանումը Յունաց և Պարսից մէջ, անկումը, Վարդական պատկերազմի պատճառներն ու Պարսից ձգտումները ոչ իրեկ պատմաբան, այլ հրատարակախոս, վարդապետ, որ իւր ունկընզիրներին որոշ ծամարառութիւն է կամենում քարոզել: Հեղինակը իւր այս նպատակին հասնելու համար յարմար տեղերում կարում է իւր պատմուածքի թիւլը կենսական այս կամ

Համաշրջը համառօս կերպով պարզելու՝ անցեալի հետ կապելով։ Հայ ընտանիքը, հաւարտի ընթերցողը, որոնց համար անշուշտ դը բուած է այս գրքոյիլու ոչ միայն փոքր իշատէ ծանօթութիւն կատանայ պատմական անցքերի մասին, այլ և հեղինակի առաջնորդութեամբ որոշ եղակացութիւններ կարող է համել ներկայ կեանքի համար։ Հեղինակի պատմուածքի անսպածոյց և պարզ ոճը աւելի կղիւրացնէ զբոյիի ընթերցանութիւնը։ առանձնապէս յանձնարարում ենք ՎIII և XII զուխոները։ Կրքոյիի վերջարանում հեղինակն իւր խոսքն ուզում է կանանց դասին։ «միակ զէնքը, որ մէնք այսուհետեւ պիսի զործ զնենք վասնդաւոր հոսանքների զէմ—այդ մանուկների զասահարակութիւնն է, որ նոյն իսկ բնութիւնից յանձնուած է ձեր մայրական խրնամքնու թող ուրեմն մեր կանայք ու տիկնայքն էլ իմանան, որ իրանց թանկագին քարերից ամենաթանկագինն է այն, որ նրանք լաւ մարդիկ պատրաստեն ազգի համար։»



## ԵՐԿՐՄԴՈՒԺԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ

### ԳԻՏԵԼԻՔՆԵՐ.

(Եարունակուրիս) \*

Դաշտամուկը փոքր կաթնասուն կենդանի է, որ պատկանում է կրծողների կարգին և համարեա բոլորովին նման է սովորական մլանը։ Սա շատ վեստակար կենդանի է և տարածուած է Եւրոպոյում։ Ասիս յում և հիւսիսային Ամերիկայում։ Համարեա մինչեւ 20 տեսակ մլանը կան, որոնք բորբն ել անպայման վեստակար են։ պատմութեանը նարյելով, այնպիսի տարիներ են եղել, որ դաշտամլները սասափի բազմանալով զիւղեր են աւերել, քանդել։ Այդպիսի մի դէպք պատահել է 1802 թ. Ֆրանսիայի արևմտեան մասում։ Դաշտամլներն ունենում են գետնափոր որ-

ջեր, ուր հաւաքում են հացահատիկներ և շատ ուրիշ պառողներ։ Եզրը տարուայ միշտ ձագեր են բերում որի համար և բարմաթիւ լինելով, բոլորովին օգուտ չունենալով՝ վրա, մեծամեծ վնասներ են հացնուածները, խոզերը և գիշատիչ թաշուները միջարդ են ասլիս որանց, դաշտամլներից շատերը ցրացից ևս սատակում են։

Խոկապէս մլաներ ոչնչացնելու արմատական միջոցներ շատ քիչ կան։ մնում է իր ըև մի միջոց յոյս զնիլ նաև հենց իրան բնութեան վրայ, որը շատ անգամ ազտակէ հացահատիկները մլաների չափազանց յարձակմունքներից։ որոնք պարբերաբար երեսցի են և նորից ոչնչացել առանց մարդու օդուածեան և նրան անցատ պատմուածներով։

Ե. Երջին ժամանակներս ամենայն տեղ ահազին քանակութեամբ բարձրացել են այս մլաներից։ Մասնաւոր մարդկանց համար դըժուար է և նոյն իսկ անկարելի կոխ մզել զաշտային մլաների հետ։ այսպիսի հանգամանքներում ցանկալի է, որ գաւառական վարչութիւնը ինքը միջոցներ ձեռք առնի որպէսպի հնար լինի ընդհանուր ոյժերով մի բան անել։ Գաւառական վարչութիւնը կարող է գործադրել կուռելու ամենասուածնակարգ միջոցներից մէկը, այն է պահել մլան ժամանակի լէֆլէքտան բացելներ և հարկաւոր գէպքում բաժին հանել ցանկացողներին։ Ցիցենք մլաներ ոչնչացնելու միքանի միջոցները որոնցից ամենայն սալին ներկայումն ապէտք և համարել մլան ժամանականութիւն վերցիւեալ լեօվլերեան բացիների միջոցով արհետական վարակումը։

Ա. Մկան ժամանակենդի լ. Ձիերեան բացիները պահում են որոշ ամրութիւն և ընդարձակութիւն ունեցող սրուակների (պրօնորք) մէջ և ծախում են Ռուսաստանի միքանի տեղերում։ այսպէս օրինակ՝ իրբե այդպիսի բացիների վաճառատեղի յայտնի է Սարատովի նահանգի գաւառական վարչութեան բակտերիոլոգիական կայարանը \*։ Այդ

\* Կովկասում յիշեալ բացիներից ձեռք բերելու համար, կարելի է դիմել Առվեսի գիւղարշանտեսական ընկերութեանը, որ ուրախութեամբ